ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐ

ՄԱՅԻՍԻ 1

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՄԱՅԻՍ 2024

#5

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ուղերձը Մայիսի մեկի կապակցությամբ

Բարի լույս հաղորդաշարի հյուրն է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը

Առաջին ծրագրի հյուրն է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը

Աշխատաժողով «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների համար

Հարգանքի տուրք Հաղթանակի զբոսայգում

Հայաստանի և Վրաստանի արհմիությունների կոնֆեդերացիաների պատվիրակություններն աշխատանքային այց են կատարել Ֆրանսիայի Հանրապետություն

«ՀԱՄԿ-ը հյուրընկալել էր Վրաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվիրակությանը

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Արդյունաբերության աշխատողների արհեսատակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալվել էր Հայաստանի հանրային ռադիոյի «Քո ձայնը» հաղորդմանը

ՀԱՄԿ-ի դիրքորոշումը «ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Արիմիութենական ամառային դպրոց Թեժ լեռում

Բովանդակություն

Բարի գալուստ,
«Արիմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արիմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արիմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արիմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:
Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արիմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ուղերձը Մայիսի մեկի կապակցությամբ



Մայիսի մեկը աշխատավորների համաշխարհային օրն է, որը, ամեն տարի նշելով, մենք արժևորում ենք աշխատողների և արհմիությունների ձեռքբերումները:

Պատմությունը ցույց տվեց, որ առանց աշխատողների և նրանց ներդրած ջանքերի հնարավոր չէ ունենալ զարգացում և առաջընթաց: Մեր օրերում աշխատավորների օրը նշում ենք մեր առջև ունենալով բազմաթիվ մարտահրավերներ՝ թե՛ աշխատանքային, թե՛ սոցիալական, թե՛ անվտանգային հարցերում:

Շարունակական պատերազմները և կոնֆլիկտները սպանում են բազմաթիվ անմեղ աշխատողների, խաթարում են պետությունների տնտեսությունները, աշխատանքային հարաբերությունները:

Չնայած առկա ճգնաժամերի ֆոնին՝ արհմիությունները շարունակում են պայքարել սոցիալական արդարության, հավասարության, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների և, ընդհանուր առմամբ, արժանապատիվ աշխատանքի համար, որին կարելի է հասնել միայն առողջ կոլեկտիվ բանակցությունների և սոցիալական գործընկերության կայացման միջոցով:

Որպես տեսլական ունենալով արժանապատիվ աշխատանքի ապահովումը՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մաղթում է բոլորիս խաղաղություն և միասնականություն:

Բարի լույս հաղորդաշարի հյուրն է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը

Ամեն տարի մայիսի 1-ին հարյուրավոր երկրներում տոնում են Աշխատավորների միջազգային օրը: Այն, ինչի համար պայքարում էր բանվոր դասակարգը, տարիներ անց ամրագրվեց օրենքով: Այսօր Աշխատանքային իրավունքներն հաստատված և պաշտպանված են միջազգային մի շարք փաստաթղթերով, կոնվեցիաներով, օրենքներով ու իհարկե Սահմանադրությամբ: Իսկ թե որքանով են աշխատանքային հարաբերություններում այդ ամենը կիրառելի, օրենսդրական առումով ինչ բացեր կան, դրական առումով ինչ փոփոխություններ են եղել, կիմանանք զրույցի ընթացքում:

Բարի լույս հաղորդաշարի հյուրն է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը:
https://shorturl.at/RFKxU

Առաջին ծրագրի հյուրն է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը:
https://shorturl.at/UoA4E

Հայաստանի և Վրաստանի արհմիությունների կոնֆեդերացիաների պատվիրակություններն աշխատանքային այց են կատարել Ֆրանսիայի Հանրապետություն

Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի հրավերով «Հարավային Կովկաս. կլիմայի փոփոխության պայմաններում աշխատանքային իրավունքների առաջխաղացում» ծրագրի շրջանակներում Հայաստանի և Վրաստանի արհմիությունների կոնֆեդերացիաների պատվիրակություններն աշխատանքային այցով 2024 թվականի մայիսի 13-ից մինչև մայիսի 17-ը գտնվում էին Ֆրանսիայի Հանրապետությունում:

Այցի շրջանակներում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի Գլխավոր քարտուղար Սոֆի Բինետի և ներկայացուցիչների, ինչպես նաև Ֆրանսիայի Տնտեսական, սոցիալական և բնապահպանական խորհրդի ներկայացուցիչների հետ՝ կլիմային փոփոխությանը, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված արհմիութենական գործունեությանը, Խորհրդի գործառույթներին և «Կանանչ պայմանագիր» քաղաքականությանը ծանոթանալու նպատակով:

Այցի ընթացքում պատվիրակություններն այցելել են նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)՝ ՏՀԶԿ-ին կից Արհմիությունների խորհրդատվական կոմիտեի գործունեությանը ծանոթանալու համար:

Աշխատաժողով «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ ս.թ. մայիսի 6-8-ը Ծաղկաձորում իրականացրեց եռօրյան աշխատաժողով բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող աշխատողների «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների համար:

Աշխատաժողովի նպատակն էր «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամներին ծանոթացնել գործող զբաղվածության ծրագրերին և մշակել քայլեր ուղղված բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց զբաղվածության կարիքների գնահատմանը և ըստ ունեցած մասնագետների և աշխատաշուկայի կարիքների համադրմանը: Մասնակիցները ծանոթացան նաև ՀՀ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին և ապագայի հմտություններին, նաև սովորեցին գրագետ կենսագրականի կազմում:

Աշխատաժողովին ներկա էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդրացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության Միասնական սոցիալական ծառայության Զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության ծրագրերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Կարապետյանը, ԱՀ Արհմիության ֆեդերացիայի նախագահ Արա Ղահրամանյանը:

Հարգանքի տուրք Հաղթանակի զբոսայգում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հարգանքի տուրք է մատուցել Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին:
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան ծաղիկներ է խոնարհել Անհայտ զինվորի հուշաքարին:

ՀԱՄԿ-ը հյուրընկալել էր Վրաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվիրակությանը

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մայիսի 21-ին հյուրընկալել էր Վրաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվիրակությանը՝ կոնֆեդերացիայի նախագահ Իրակլի Պետրիաշվիլիի գլխավորությամբ:

Հանդիպմանը հիմնական քննարկվող թեման աշխատավայրում առկա գենդերային անհավասարության բացառմանն ուղղված քայլերի ներկայացումն էր: Երկու պետությունների արհմիությունների նախագահները խոսեցին երկրներում առկա խնդիրներից, իրենց կատարված աշխատանքներից և հույս հայտնեցին, որ մոտ ապագայում կունենան զգալի արդյունք աշխատավայրում սեռով պայմանավորված խտրականության վերացման հարցում:

Ողջունելով հյուրերին՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը կարևորեց հարևան պետությունների միջև արհմիութենական կապերի ամրապնդումը և արժևորեց նման քննարկումները, քանի որ փորձի նման փոխանակումները համանման խնդիրների լուծման համար ստեղծում են նոր հնարավորություններ:

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Արդյունաբերության աշխատողների արհեսատակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի մայիսի 18-ից մինչև 2024 թվականի մայիսի 19-ը Ծաղկաձորում կազմակերպել է «Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Արդյունաբերության աշխատողների արհեսատակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար:

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալվել էր Հայաստանի հանրային ռադիոյի «Քո ձայնը» հաղորդմանը

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը
https://www.youtube.com/watch?v=Ap2m997sW7Y

ՀԱՄԿ-ի դիրքորոշումը «ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, Երևան, Վ. Սարգսյան 26/3, հեռ.՝ (010) 54 52 37, էլ. հասցե՝ hamk@hamk.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՏԻԿԻՆ ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Նանուշյան,

«ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) ավելացվել է առողջապահական բնագավառի որոշ աշխատողների աշխատաժամանակի տևողությունը: Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ «փոփոխությունը նպատակ ունի պահպանելով բուժաշխատողների վարձատրության չափը, համապատասխանեցնել բուժաշխատողների աշխատաժամանակը բժշկական ծառայությունների պահանջարկին, համապատասխանեցնել գործող կարգավորումները ներկա ժամանակի պահանջներին՝ հաշվի առնելով բնագավառում տեղի ունեցած զիտատեխնիկական նվաճումները»:

Նախագծի փոփոխությամբ աշխատողների աշխատանքի ծավալն ավելանում է, իսկ վարձատրության չափը պահպանվում է:

Մինչդեռ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե սահմանված նորմաների համեմատությամբ ավելանում է աշխատողի աշխատանքի ծավալը, ապա նրա աշխատանքը վարձատրվում է կատարված աշխատանքի ծավալին համապատասխան»:

Հիմնավորման մեջ նշված է նաև, որ աշխատաժամանակի ավելացումն կնպաստի մեծ քանակությամբ քաղաքացիների սպասարկմանը, հերթերի ու դժգոհությունների կրճատմանը:

Աշխատաժամանակի ավելացումն չի բխում Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2004թ.) 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, որի համաձայն՝ «Աշխատանքի արդար պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. օրական և շաբաթական աշխատանքային ժամերի բանական տևողությունը ապահովելու համար աշխատանքային շաբաթը պետք է աստիճանաբար կրճատվի այն չափով, որը թույլատրվում է արտադրական աճով և այլ համապատասխան գործոններով, »:

Հաշվի առնելով վերոնշվածը՝ ՀՀ օրենսդրությունից և ՀՀ միջազգային պարտավորություններից չի բխում աշխատողների հաշվին «լավարկել» քաղաքացիների սպասարկումը, հերթերի և դժգոհությունների կրճատումը:

Արհմիութենական ամառային դպրոց Թեժ լեռում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը ս.թ. մայիսի 24-26-ը համատեղ իրականացրեցին Արհմիութենական ամառային դպրոցը։
Արհմիութենական եռօրյայի ընթացքում մասնակիցները ծանոթացան արհմիության նպատակներին և գործառույթներին, աշխատանքային միջավայրում կոնֆլիկտների կառավարմանը, աշխատավայրում ճգնաժամային իրավիճակների կառավարմանը, արհմիությունների դերին աշխատավայրում խտրականության վերացման գործընթացում, աշխատավայրում բռնության և ոտնձգության բացառմանն ուղղված քայլերին։
Բուռն քննարկումների, ընդգրկուն դասընթացների, ակտիվ խաղերի և համերաշխության մթնոլորտում ծնվեցին բազում գաղափարներ, որոնց իրագործումը հնարավորություն կտա ունենալ առավել անխոչընդոտ, առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ։
Արհմիութենականները ավարտական սերտիֆիկատներով պարգևատրվեցին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի կողմից։

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am